

ուշագրութեան արժանի է վերջին դաս
 առատանի նկարը, որ իր ամբողջութեան
 մէջ ցայտուն գաղափար ժը կու տայ մեզի
 Քորոս Ռալլինի հարուստ երևակայու-
 թեան մտորին: Հաադոյն վրձինի արտա-
 գրութեան ժըն է այս մէկն ալ, ուր բազմ-
 մասիւ խմբական պատկերները, տիպար-
 ներու խօսուն արթայայտութիւններն ու
 շարժումները կը բարձրացնեն նկարին
 գեղարուեստական արժէքը:

Ռալլինի մանրանկարչութեան ոճէն
 հետեցնելով, երկու ուրիշ ձեռագիրներ
 կը վերագրուին իրեն, ինչպէս կը հա-
 ճատէ Փրօֆ. Ս. Տէր Ներսէսեան: Ասոնք
 են՝ Երևանի Մատենադարանին թիւ 5458
 Աւետարանը, ծաղկուած 1266ին Հռոմ-
 կլանի մէջ Հեթում Ա.ի համար, և Ուսա-
 շինկթընի Freer Gallery of Artի թիւ
 32-18ը. որ գրուած է ծաղկուած է Հե-
 թում Ա.ի եղբոր՝ Վասակ իշխանի համար:

Իսկ Երևանի Մատենադարանին մէջ
 գտնուող թիւ 8321 Աւետարանը, որուն
 մէջ կը գտնուի երիտասարդ Հեոն Իշխանի
 գրմանկարը, կարելի է համարել Ք. Ռա-
 լլինի ամենականուխ ծաղկած Աւետարանը,
 1254 թուականին: Ուրեմն, այսպէս, ութ
 ծաղկուած Աւետարաններ հասած կ'ըլլան
 մեզի մեծատուչակ արուեստագէտի թողուն
 վրձինէն(?) :

Կը տեղեկանանք նաև Քորոս Ռալլինի
 ծաղկած 1262ի Աւետարանի յիշատակա-
 րանէն (որուն մասին խօսեցանք վերը),
 թէ կոտասնդին Ա. կաթողիկոսի ժամա-
 նակ գրուած են շատ տւելի ձեռագիրներ,
 քան մեզի յայտնի եղածները: Այդ շըր-
 ջանին գրուած է Հին Կասկարան ժը կօ,
 որ մինչև հիմա յայտնի չէ եղած բունա-
 օրրութեան:

ՎԱՁԷ Մ. ՎՐԴ. ԻՆԿԱՏԻՈՍԵԱՆ

Մտտեկլ



(*) Նայն, էջ 161

“ՅԻՍՈՒՄԻ ԵՂՐԱՅՐԵՐԸ”

Աւետարանի հասարակ ընթերցող ժը
 յանախ թերհասկացողութիւններ կ'ունե-
 նայ Աւետարանական կարգ ժը նշմարաւ
 թիւներն արթայայտութիւններ ըմբռ-
 նելու մէջ: Անոնցմէ մին է Յիսուսի եղ-
 րայրներ ունենալու պարագան:

Հայց. Եկեղեցւոյ Հոգևոր Հայրերու
 մեկնադանութիւններէն օգտուելով պիտի
 ջանանք կարգ ժը լուսարարութիւննը
 աւլ՝ միանգամ ընդմիշտ փարստելու հա-
 մար սխալ հասկացողութիւններն ու թե-
 րահաւասութիւնը շատերու, որոնք կը
 շարունակին պնդել իրենց գաղափարնե-
 րուն և ըմբռնումներուն վրայ:

Նախ կ'ուզենք յատկացնել այն սխալ
 ըմբռումը թէ Տեառնեղբայրներ Յիսուսի
 քնարած ասանկրկու առաքեալներու խոմ-
 բին մտա կը կաղմեն:

Մամ. ԺԳ. 55ի մէջ ՁԵԽԱՌԻ Եղ-
 րայրները կուռւած չորս եղբայրներ՝ Յա-
 կոբոս, Յովնէս, Սիմոն և Յուզա կը յի-
 շատակուին: Իսկ առաքեալներուն մէջ
 քով քովի նշանակուած կը գտնենք Յա-
 կոբոս, Սիմոն և Յուզա պնանները:

Արևմտեան Եկեղեցին կ'ուզէ նոյնա-
 ցընել այդ երեք համանունները, պայտ-
 պանելով որ անոնք նոյնինքն Տեառնեղ-
 րայրներն են, ասանկրկու առաքեալնե-
 րուն մէջ աւնուած:

Միք Եկեղեցին ասիկա անհաւանական
 կը գտնէ, Աւետարանական փաստեր ը-
 րելով՝ —

1. — Երկրորդասան առաքեալներու ըն-
 տրութենէն ետք Տեառնեղբայրներ Սուրբ
 Կոյսի հետ կու գան Յիսուսը փնտակու
 (Մրկ. Թ. 31), ինչ որ ցոյց կու տայ թէ
 տարբեր է ին պնեք շըլքու առաքեալներէն:

2. — Տասներկու առաքեալներու ըն-
 տրութենէն տարի ժը ետք, Տեառնեղբայր-
 ներ կը յորդորեն Յիսուսը որ Երուսաղէմ
 երթայ և ինքզինքը աշխարհի յայտնէ.
 ճԲանդի և եղբորքն իսկ չէին հաւատար-
 կայ ի նաջ (Յովն. Ե. 5): Յիսուսի հետ
 շըլքող առաքեալներուն չի յարմարիք այս-
 պիտի թերահաւասութիւն ժը:

3. — Թիսուսի համբարանումն ետք, վերնաստան մէջ հաւաքուած հուսալարեալներու մասին Ղուկաս Աւետարանիչ մտաւորապէս առաքեալները իրենց անուաններով կը յիշէ. որոնց մէջ են նաեւ Յակոբոս Ալփեան, Շմաւոն Նախանձայայ և Յուզա Յակոբեան, Ապո կ'աւելցնէ թէ ՎՊՊք ամենեքեան (մետաւան առաքեալները) էին հանապազորդեալ միաբան յարթա հանդերձ կանամբք և Մարեմաւ մարբն Յիսուսի և եղբարքք նորա՝ (Կորժք, Ա. 13-14): Որով Տեսանկերայրները յատկուպէս կը զտառուին առաքեալներէն:

4. — Եթէ իրապէս երկոտասանից մէջ երեք հարազատ եղբայրներ ըլլային, Աւետարանիչները նշանակած կ'ըլլային, ինչպէս կ'ընեն Յովնանեան և Ջերեդեան եղբայրներու պարագային:

Հեռեւորք Յակոբոս Ջերեդեայ, Յակոբոս Ալփեայ և Յակոբոս Տեսանկերայր երեք տարբեր Յակոբոսներ են, և այս պատճառաւ մեր Եկեղեցին ալ երեք տարբեր աօներ կը կատարէ երեք առաքեալներուն համար:

«Թիսուսի Եղբայրներուն մասին ակնորկութիւններ կան Մտաթ. ԺԲ. 46-50ի, Մտաթ. ԺԳ. 53-54ի, Մրկ. Գ. 31-35ի և ՂԿ. Ը. 19-21ի մէջ:

Տեսանկերայրները Ս. կոյսին հետ կու գան Թիսուսը փնտռելու, որովհետեւ Ան երկար ժամանակէ ի վեր կը քարոզէր և հետեւորք հանգստանալու պէտք ունէր: Երբ լուրը Յիսուսի կը հասնի, մեր Տէչը չի հաճիր ընդհատել իր քարոզը, այլ ձեռքը տարածելով և իր աշակերտներն ու հետեւորդները մտանանչելով, զգայուն ձայնով մը կ'ըսէ. «Ով որ Աստուծոյ կամքը կը կատարէ, ան է իմ եղբայրս և քոյրս և մայրս» (Մրկ. Գ. 35): Ետքից օր մը Բրիտանոս Նադարէթի փողովարանին մէջ կը սկսի քարոզել և աւետարանակամ վարդապետութիւնը երկնից արքայութեան յայտնուելուն և Նոր Ուխտի սկսելուն խորհուրդները մեկնել անպիսի խորունկ և զօրուոր կերպով, որ բոլոր լսողները սկսան զարմանալ իր ունեցած իմաստութեան և զօրութեան վրայ՝ ըսելով. «Ո՞րք սա է մանուկ հիւսանն և որդին Մարեմայ, եղբայր Յակով-

բայ և Յովսեայ և Յուզայի և Սիմոնի, և չիքոնք քորք դարս սաա առ մեզ» (Մրկ. Զօ 3):

Արդեօք ի՞նչ կերպով կամ ի՞նչ կապակցութեամբ Յակոբոս, Յովսէս, Յուզա և Սիմոն կրնան Թիսուսի եղբայրները կոչուիլ:

«Եղբայր» կոչման խիստ իմաստին հետեւելով. սմանք կ'ենթադրեն թէ այս չորսը Յիսուսի հարազատ եղբայրներն էին, իր ծնունդէն ետք ծնած Յովսէփի և Մարիամի զուակները, ջանի որ Թիսուս Անդրանիկ կոչուած էր (ՂԿ. Բ. 7):

Ասիկա անհուանակամ է, որովհետեւ այսպիսով եղծած կ'ըլլան Աստուածածնի կոյս յոս ծննդեան և միշտ կոյս ըլլալուն պատիւը: Մեր Եկեղեցին կ'ընդունի կոյս յոս ծննդեան և միշտ Սուրբ կոյս բուցարութեան իրականութիւնը:

Ուրիշներ կը խորհին թէ Յովսէփ իր առաջին ամուսնութենէն ունէր յիշեալ չորս զուակները և Մարիամ իր երկրորդ կինը ըլլալով, Թիսուս հանրութեան կողմէ միւս չորսին որպէս եղբայր կը ճանչցուէր, ինչպէս որ Յովսէփի Որդի ալ կը կոչուէր:

Կրիսուսի և Տեսանկերայրներուն ազգակցութիւնը հարազատ չէր: Արեւելքի մէջ եղբայրներու և քոյրերու զուակները իրարու եղբայր և քոյր կը կոչուէին: Աւետարաններէն քողելով կրնանք հաստատել և բացատրել իրականութիւնը:

Աւետարանները Թիսուսի խաչին մօտ գտնուող կրնէրը յիշելու տանն հետեւեալ անունները կու տան. «Մարիամ Մազդազնեսցի և Մարիամ Յակովբայ և Յովսեայ մայր, և մայր որդուցն Ջերեդեայ» (Մտաթ. ԻԷ. 56): «Մարիամ Մազդազնեսցի և Մարիամ Յակոբուս փոքրկան և Յովսեայ մայրն, և Սողոմէ» (Մրկ. ԺԵ. 40): Մայրն նորս և քոյր մօր նորս Մարիամ կըլուցայ և Մարիամ Մազդազնեսցի» (Յովժ. ԺԺ. 25):

Տիրամայրէն զառ, զար միայն Յովսեաննէս Աւետարանիչ յիշած է, երեք կրիսուս անուաներ կը գտնենք խաչելութեան ժամանակ: Մարիամ Մազդազնեսցի ծանօթ է: Երկրորդ Մարիամ մը՝ Յակոբի և Յովսէփի մայր կոչուած, հաւանաբար

չորս Տեառնեղբայրներուն մայրը կրնայ ճանչցուիլ: Ուրիշ տեղ մը նոյն Մարիամը կոչուած է կղեովպասի կին և հետևաբար կղեովպաս Տեառնեղբայրներուն նայրը կ'ըլլայ: Ուրեմն Տեառնեղբայրները կղեովպասի և Մարիամի - ոչ թէ Տիրամօր - զաւակներն էին:

Տիրամայրն ու Մարիամ կղեովպայ քոյրեր չեն կրնար ըլլալ, որովհետև Տիրամայր Մարիամ Յովակիմի և Աննայի ժիպի աղջիկն էր՝ ըստ աւանդութեան: Ընդունուած աւանդութիւնն այն է թէ Յովսէփ - Աստուածահայր - և կղեովպաս եղբայրներ էին: Որով Յիսուս և Տեառնեղբայրներ հօրեղբորորդիներ կ'ըլլային և ժամանակի սովորութեամբ իրարու եղբայր կը նկատուէին և կը կոչուէին:

Յովհաննէս Աւետարանչի գրած շնչ քոյր մօր նորա Մարիամ կղեովպայն խօսքով Մարիամ կղեովպայ Մարիամ Տիրամօր իբրև նարազատ քոյր չի կրնար ըլլալ՝ ինչպէս տեսնուք, այլ իրարու ներ կ'ըլլան: Իսկ ներերն ալ իրարու քոյր անուանել սովորական չէ: Միև կողմէ, եթէ «քոյր մօր նորա» խօսքը ուղղակի Մարիամ կղեովպայի պատշաճեցնենք, խաչին մօտ Յովհաննէս երկու կիներ յիշած կ'ըլլայ Տիրամայրէն զատ: Միև Աւետարանները երեք կիներ կը յիշեն: Յովհաննէս և իր մայրը՝ Սողոմէ խաչին մօտ կը գտնուէին: Յովհաննէս չի կրնար մոռցած ըլլալ իր մայրը:

Յովհաննէսին խօսքը ստորակէտ մը աւելցնելով կարողուէ, այսպէս. «Մայրն նորա և քոյր մօր նորա, Մարիամ կղեովպայ և Մարիամ Մազդաղեանացի» (ԺԲ. 25): Տիրամօր քոյր կոչուած կինը կ'ըլլայ Սողոմէն, որ իրապէս ալ Ս. Կոյսի մօրաքնուորդին է: Մատթան Գաճանայ երեք աղջիկներ ունեցաւ, Աննա՝ Տիրամայր Մարիամի մայրը, Սովիւէ՝ եղիսարէթի մայրը և Մարիամ՝ Սողոմէի մայրը: Որով Տիրամայրը, եղիսարէթը և Սողոմէն իրարու մօրաքնուորդիներ կ'ըլլան: Այս բացատրութեամբ է որ Յովհաննէս նշանակած է իր մայրը՝ Սողոմէն, իբրև «քոյր մօր նորա»:

Նազարէթցիներուն ըսած խօսքին մէջ չորս Տեառնեղբայրներէն զատ կը յիշուին նաև Տեառնաքոյրեր. «Զիցե՞նք քոյր գորս աստ առ մեզ» (Մրկ. 2. 3). այսինքն ըսել կ'ուզեն թէ անոր քոյրերը ատկաւին մեր քաղաքին մէջ չեն: Աւետարաններէն որեւէ տեղեկութիւն չունինք անոնց մասին: Ուրեմն Տեառնեղբայրներ քոյրեր ալ ունէին, որոնք Նազարէթի մէջ կ'ապրէին՝ ամուսնութեան պատճառաւ: Իսկ Տեառնեղբայրներ Տիրամօր հետ կափառնաւած կը գտնուէին:

Որով կը տեսնենք թէ Քրիստոս նարազատ եղբայրներ և քոյրեր չունէր, և Տիրամայր Մարիամ մեր եկեղեցւոյ կողմէ կ'ընդունուի որպէս Աստուածածին և միշտ Սուրբ Կոյս:

Գալլիֆորնիա

ՍԻՓԱՆ ՎՐԴ. ՄԵՍԵԱՆ

